ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1703 27.02.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի փետրվարի 18-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ արձանագրեց մի շարք խախտումներ և թերություններ.

Դիտորդական խմբի նախավերջին այցելության հետ համեմատած՝ մոտ երկու ամիս է ՁՊՎ-ում վերանորոգման աշխատանքներ են կատարվում և արդյունքում՝ նշված ժամանակահատվածում չի գործում ՁՊՎ-ի միակ լոգարանը և զբոսաբակը և ձերբակալվածները զրկված են լոգանք ընդունելուց և զբոսանքի դուրս գալուց:

Ներկայացվածի վերաբերյալ Դիտորդական խումբը կարծում է, որ ՁՊՎ-ն պետք է ընդհանրապես փակվեր վերանորոգման ընթացքում և հետո նոր վերաբացվեր, այլ ոչ թե ձերբակալվածների իրավունքները խախտելով փորձել վերանորոգման աշխատանքներ կատարել:

Ինչպես նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ վերջին այցելության ընթացքում Դիտորդական խումբը արձանագրեց, որ բուժսենյակի համապատասխան մահճակալի վրա բացակայում էր բժշկական սավանը, որի վերաբերյալ նախորդ անգամ տեղեկացվել էր Դիտորդական խմբի կողմից պատասխանատու ոստիկաններին:

Դեղարկղում առկա էր ժամկետանց յոդ, այն դեպքում, երբ պահեստում ունեին առնվազն 6-7 ժամկետի մեջ գտնվող յոդեր:

Բուժսենյակի դեղարկղում բացակայում էր հակաալերգիկ դեղորայքը:

<<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում թերի գրանցումներ կատարելու վերաբերյալ նախորդ այցելության ընթացքում պատասխանատու ոստիկանին բացատրվել էր դրանց լրացնելու ձևաչափը և կարևորությունը, բայց կրկին բուժմատյանը լրացվում էր թերություններով: Խնդիրը կայանում է նրանում, որ ձերբակալվածներին ընդունում են մարմնական վնասվածքներով, գրանցում են քերծվածքների և վերքերի վերաբերյալ, հաջորդիվ՝ վերքի մշակում չեն իրականացնում: Մի շարք թերություններ հաշվի առնելով, Դիտորդական խումբը գտնում է, որ ՀՊՎ-ի բուժաշխատողների համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական սեմինար պարապմունքներ՝ գիտելիքները բարձրացնելու նպատակով:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

22 ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Ս.Իսկանդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-1020

«27» 03 2017թ.

Ձեր 27.02.2017թ. թիվ 2621/1703 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Սուրեն Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2017թ. փետրվարի 18-ին ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Երևան քաղաքի վարչությունում, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

ՁՊՎ-ի վարչական շենքը բարեկարգելու և ձերբակալվածների կոմունալ կենցաղային պայմանները բարելավելու նպատակով, այնտեղ իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում առաջացել են որոշակի անհարմարություններ ձերբակալվածների լոգանք ընդունելու և զբոսանքի հետ կապված: Շինարարական աշխատանքներ կատարելու ընթացքում ՁՊՎ-ի գործունեությունը նպատակահարմար չի եղել դադարեցնել, քանի որ այն սպասարկում է ոստիկանության Երևան քաղաքի վարչությանը և ենթակա ստորաբաժանումներին, ինչպես նաև այլ գերատեսչությունների և գործունեությունը դադարեցնելու պարագայում կառաջանային խոչընդոտներ ձերբակալվածներին մարզային ստորաբաժանումների ՁՊՎ-ներ ուղեկցելու հետ կապված: Միաժամանակ տեղեկացվում է, որ շինարարական աշխատանքները ավարտվել են և ձերբակալվածների համար ստեղծվել են ավելի բարենպաստ կենցաղային պայմաններ:

ՁՊՎ-ի բուժսենյակին վերաբերվող թերությունները վերացվել են՝ թաղտահ վրա գցվել է մեկանգամյա օգտագործման բժշկական սավան, դեղարկղը համալրվել է հակաալերգիկ դեղատեսակով, իսկ ժամկետանց յոդը փոխարինվել է նորով:

ՁՊՎ ընդունվող ձերբակալվածների մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերվելու դեպքում ՁՊՎ-ի բուժակների կողմից ցուցաբերվում է անհրաժեշտ բուժօգնություն ու այդ մասին համապատասխան գրառումներ են կատարվում <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: Ձերբակալվածների մարմնական վնասվածքների՝ քերծվածքների կամ վերքերի մշակում չի կատարվում այն դեպքերում, երբ դրանք լինում են

կեղևակալած և բժշկական միջամտության կարիք չունեն, հետևաբար հիշյալ գրանցամատյանում բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ նշումներ չեն կատարվում:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ի բուժակների մասնագիտական գիտելիքները բարձրացնելու նպատակով սեմինար պարապմունքներ իրականացնելու դիտորդների խմբի առաջարկին, ապա այն կքննարկվի ՀՀ ոստիկանությունում և այդ ուղղությամբ կձեռնարկվեն համապատասխան քայլեր:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ